

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ՝ ԸՍՏ Ռ. ՍՅՈՒՆԻԻ

ՍԵՂԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Թուրքական իշխանությունը, բոլոր հնարավոր ու անհնար միջոցներով շրջանցելով մարդկային բարոյականության ամենատարրական նորմերը, տարիներ շարունակ գործի է գցել իր հակահայկական քարոզչամեքենան, որը միշտ նույն նպատակակետին է ուղղված՝ մոլորեցնել միջազգային հանրությանը Հայոց ցեղասպանությունը ճանաչելու հարցում: Պատմությունը կեղծելու գործում լուրջ հաջողություններ ապահովելու միտումով Թուրքիան, իհարկե, չի սահմանափակվում միայն սեփական ուժերով, այլ հաճախ դիմում է օտարերկրյա պատմաբանների օգնությանը, որոնք, այս կամ այն շահադիտական նկատառումներով թաքնվելով «ճշմարիտ» պատմականության ու գիտականության քողի տակ, փորձում են հերքել անհերքելին: Օրինակ՝ 1950-ականներին ամերիկացի Վ. Թոմասը պնդում էր, թե թուրքերն ընդամենը հակազդել են հայկական սպառնալիքին¹: Իսկ Բրիտանիայի և Ամերիկայի պատմության մասնագետ, արևելագետ Բերնարդ Լյուիսը հայկական ազատագրական շարժումը դիտում էր որպես մահացու սպառնալիք Թուրքիայի համար²: Կեղծարարները հաճախ այն աստիճան անսքող ու հանդուգն են դառնում, որ փորձում են համոզել, թե Մեծ եղեռնը լոկ հայերի «հիվանդոտ երևակայության արդյունքն է», իսկ հայերը «սառնասիրտ», «մոլեռանդ» ահաբեկիչներ են³:

Ինչպես թուրքական, այնպես էլ արևմտյան վայգիտականների շրջանակում քիչ չեն մաս փորձերը շահարկելու Առաջին համաշխարհային պատերազմի փաստը և դրանով պայմանավորված որոշ հանգամանքներ՝ ժխտելու Հայոց ցեղասպանությունը, պիտակավորելու այն որպես տեղահանություն՝ պատճառաբանելով, թե Օսմանյան կայսրության անելանելի վիճակը ստիպեց նրան տեղահան անել արևմտահայերին աղքատության, սովի և պատերազմական որոշ գործողությունների պատճառով⁴: Սակայն

¹ Վ. Թոմասը արդարացնում էր բռնի ուժի գործադրման Թուրքիայի քաղաքականությունը, քանի որ հենց այդ բռնությունը եղավ թուրքական հանրապետության գոյության գրավականը (տե՛ս Ս. Կ. Պողոսյան, Գոյատևման պայքարի քառուղիներում, Եր., 1989, էջ 284):

² Տե՛ս B. Lewis, *The Emergence of Modern Turkey*, 3-rd edition, Oxford University Press, 2002:

³ Օրինակ, ամերիկացի պատմաբաններ տեր և տիկին Շոուները «համոզված են», որ հայերից մոտ 200 հազարը զոհվեց ոչ միայն տեղահանության, այլև սովի, հիվանդությունների և ռազմական գործողությունների պատճառով, ինչը այդ նույն ժամանակ պատահեց շուրջ 2 միլիոն մահմեդականների հետ... (տե՛ս S. Shaw, *History of the Ottoman Empire and Modern Turkey*, vol.1, Cambridge University Press, 1976, S. Shaw, E. K. Shaw, *History of the Ottoman Empire and Modern Turkey*, vol. 2, Cambridge University Press, 1977):

⁴ Այս տեսակետի գործում քարոզողներից է, օրինակ, Գ. Լյուիսը, ըստ որի՝ Օսմանյան կայսրությունը չէր կարող հայերի ջարդերը իրականացնելու պատասխանատուն լինել, քանի որ թուրք ազգի զինվորները նույնպես տառապյալների շարքում էին: Կայսրությունը չէր կարող իր քաղաքացիներին հարվածի տակ դնել (տե՛ս G. Lewy, *The*

հենց իրենք՝ թուրք հեղինակներն են վկայում, որ հայերի զանգվածային բռնագաղթն ու ջարդերը Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի տարբեր բնակավայրերում ոչ մի կապ չեն ունեցել պատերազմական միջոցառումների հետ⁵: Տիրանալով Հայկական լեռնաշխարհին՝ թուրքերն ի սկզբանե վարել են հայահալած քաղաքականություն, իսկ հայության բնաջնջման որոշումը, որը, փաստորեն, համիդյան Բարձր դռան գործադրած ջարդարարական քաղաքականության շարունակությունն էր⁶, վաղուց արդեն կայացված էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխների կողմից:

Ինչ վերաբերում է թուրքական այսօրինակ վարքագծի պատճառներին, ապա բազմիցս հիմնավորվել է, որ թուրքիզմի և պանթուրքիզմի մարմաջն էր, որ հանգիստ չէր տալիս թուրքերին: Դրա վառ ապացույցն են տարբեր առիթներով հստակ հնչեցված այն հայտարարությունները, թե մահմեդականների ու քրիստոնյաների հավասարության մասին խոսք անգամ չի կարող լինել, և թե կայսրության նկարագիրը պետք է բացառապես մահմեդական լինի⁷: Համաձայն պանթուրքիզմի գաղափարախոս Ջիյա Գյոքալփի՝ թուրքիզմը և պանթուրքիզմը, որոնք թուրք և թրքալեզու ժողովուրդների ազգային գաղափարախոսություններն էին, պետք է կենսագործվեին երեք փուլով. առաջինը թուրքիզմի հաստատման փուլն էր, երբ թուրքիան պիտի դարձնեին թուրքերի հայրենքը՝ թուրքացնելով կամ ոչնչացնելով մյուս ժողովուրդներին: Երկրորդ փուլում ծրագրում էին ստեղծել օղուզական պետություն, որի կազմում կլինեին թուրքիան, Ադրբեջանը և Պարսկական Ադրբեջանը, իսկ երրորդ փուլում, որը պանթուրանիզմի (պանթուրքիզմի) հաստատման փուլն էր, նախատեսվում էր ձեռնամուխ լինել միացյալ և անկախ թուրանի ստեղծմանը, որն էլ տարածվելու էր Միջերկրական ծո-

Armenian Massacres in Ottoman Turkey: A Disputed Genocide, Salt Lake City: University of Utah Press, 2004: Այս մասին մանրամասն տես՝ **Ս. Գասպարյան**, Գյունտեր Լյուիի «Ճշմարտությունը» Հայոց ցեղասպանության մասին, «Բանբեր Երևանի համալսարանի, Հայագիտություն», 2013 թ., թիվ 139.1, էջ 3-17):

⁵ Երանց պնդմամբ՝ բոլորովին հակառակը՝ պատերազմական գործողությունների առումով առավել անվտանգ տարածքներից (Բոլու, Քասթամունու, Անկարա, Իզմիր, Քյուսահիա և այլն) հայերին քստրում էին պատերազմական շրջաններ (Միրիայի և Իրաքի անապատներ) (տես «Թուրքերը թուրքերի մասին», հ. III, կազմ. և խմբ.՝ Ռ. Մելքոնյան, Եր., 2011, էջ 16, «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի», առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Յ. Փափազյանի, Եր., 1988):

⁶ Հայտնի է, որ դեռևս Համիդի կառավարությունը գլխավորող Քյամիլ փաշան է արտահայտել այն համոզմունքը, թե Հայկական հարցի լուծման ճանապարհը հայ ժողովրդին ֆիզիկապես ոչնչացնելն է, մանավանդ որ բոլոր միջոցներն ունեին՝ քուրդ, կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես՝ ամեն ինչ՝ կրոնական պատերազմ հայտարարելու այնպիսի մի ազգի դեմ, որը ո՛չ զենք ուներ, ո՛չ զինվորություն և ո՛չ էլ պաշտոն, երբ, ընդհակառակը, իրենք զենք էլ ունեին, զինվորություն էլ, և աշխարհի ամենամեծ ու հարուստ տերություններից մեկը՝ Անգլիան, իրենց զինակիցն էր և ասիական աշխարհի երաշխավորը (տես **Լ. Խուրշուդյան**, Հայկական հարցը, Եր., 1995, էջ 33):

⁷ Հայտնի է, օրինակ, որ դեռևս 1910 և 1911 թթ. երիտթուրքերի՝ Սալոնիկում կայացած համաժողովներում արծարծվել է մահմեդական գերիշխանության հասնելու խնդիրը, և դրա լուծման լավագույն միջոց է համարվել լեզուն (տես **Լ. Խուրշուդյան**, Հայոց ցեղասպանության պատճառները և պատմական դասերը // «Հայոց ցեղասպանությունը (ուսումնասիրություններ)», խմբ.՝ Պ. Հովհաննիսյան, Եր., 2001):

վից մինչև Խաղաղ օվկիանոս, Չինաստանից մինչև Հյուսիսային օվկիանոս⁸: Այդ ծրագրերն իրականացնելու համար թուրքերը սպասում էին հարմար պահի, և Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումը պատեհ առիթ դարձավ թուրքական զանգվածային ոճրագործություններին նոր թափ հաղորդելու առումով:

Բազմաթիվ թուրք բանաստեղծներ (Ձիյա Գյոքալփի, Էնիս Ավնի, Մեհմետ Էմին և այլք) ոգեշնչում էին թուրք ժողովրդին իրենց «ազգային», «բարոյական» գաղափարներով՝ կոչ անելով համախմբվել, արյան գնով էլ լինի իրագործել պանթուրքիզմի ծրագիրը և ստեղծել մեկ միասնական հայրենիք: Գյոքալփը, օրինակ, բացեիբաց հայտարարում էր, որ պետք է պատժել բոլոր նրանց, ովքեր կղավաճանեն «թրքությանը», որը, ըստ նրա, պահանջում էր «միասնական խիղճ», կրոն, հայրենիք և հատկապես լեզու⁹: Մեհմետ Էմինը, ջատագովելով Մեծ Թուրանի գաղափարը (*Մեկ փեթակ ունին բոլոր մեղուները, / Մեկ Թուրան պետք է ունենան բոլոր թուրքերը*), զգուշացնում էր, որ «առանց արյան ծաղիկ չի աճում»¹⁰:

Ցավալին այն է, որ հակահայկական քարոզչության սարդոստայնում երբեմն հայտնվում են նաև հայկական ծագում ունեցող ուսումնասիրողներ, որոնք, կամա թե ակամա տուրք տալով թուրքածին գաղափարներին, իրենց նպաստն են բերում դրանց քարոզման ռազմավարությունը խթանելու գործին: Այս առումով առանձնակի ուշադրություն են պահանջում Ռ. Սյունիի *Looking Toward Ararat* գիրքը և նրա խմբագրությամբ հրատարակված *A Question of Genocide (Armenians and Turks at the End of the Ottoman Empire)* հոդվածների ժողովածուն, որոնցում առկա որոշ հարցադրումների ուսումնասիրությունը՝ դրանց լեզվական հայեցակերպի քննությամբ և պատմաքաղաքական իրողությունների հաշվառումով, թույլ է տալիս վեր հանելու հեղինակի՝ հենքային առումով կարևոր մտածական դրսևորումներն ու պատմաքաղաքական կողմնորոշումները, որն էլ բերում է նրա բուն նպատակի բացահայտմանը:

Նախ անդրադառնանք *Looking Toward Ararat* գրքին, որտեղ *Rethinking the Unthinkable: Toward an Understanding of the Armenian Genocide* ենթագլխում Ռ. Սյունին հայ-թուրքական հարաբերությունները ներկայացնում է երեք փուլով, և դա արտացոլվում է տեքստի կառուցվածքային առանձնահատկություններում. Հայոց ցեղասպանության մասին իր ընկալումները ստորաբաժանելով երեք միկրոտեքստերի՝ հեղինակը հանգում է հետևյալ կառուցվածքային մոդելին¹¹. **A** (**a** - Ideology or Social Ecology?, **b** - From

⁸ Տե՛ս **Լ. Խուրշուդյան**, Հայկական հարցը, էջ 34-35:

⁹ Ձիյա Գյոքալփը, Մեծ Թուրանի գաղափարի հիմքում դնելով լեզուն, գրում էր. «Թուրանն ունի մեկ ժողովուրդ, / Եվ ունի մեկ լեզու, / «Ուրիշ լեզու կա» ասողն, / Ուրիշ մի նպատակ ունի» (տե՛ս **Ա. Սաֆարյան**, Ձիյա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները», Եր., 2012, էջ 82-84): Էնիս Ավնին շարադրում էր այդ ճանապարհին ընկած ժողովուրդների ոչնչացման ծրագրի իրականացման ձևերը: Բանաստեղծության տողերից իսկ ակնհայտ է, թե ինչ մահացու վտանգ էր սպառնում հայ ժողովրդին. «Կոխած տեղերուս ամեն մեկ մասն արյուն պիտի ժայթքե... / Երկարած թաթիս տակ գարունները՝ աշնան և աշունները / զնտանի պիտի վերածվեն... / Եթե քար քարի վրա թողնեմ՝ ետիս թողած օճախս թող քանդվի... / Վարդաստանները մեռելաստան պիտի ընեն ստրովս...» (**Լ. Խուրշուդյան**, Հայկական հարցը, էջ 37):

¹⁰ Տե՛ս **Լ. Խուրշուդյան**, նույն տեղում, էջ 36:

¹¹ Տեքստի կառուցվածքային առանձնահատկությունների մասին խոսելիս տեղին

Symbiosis to Massacre, c - From Massacre to Genocide), որտեղ A-ն բուն գլուխն է, իսկ a, b, c-ն՝ գլխում առկա միկրոտեքստերը, որոնք ներկայացնում են հայ-թուրքական հարաբերությունների պատմաքաղաքական զարգացման փուլերը՝ ըստ գրքի հեղինակի մեկնաբանության:

Առաջին միկրոտեքստը սկսվում է *Ideology or Social Ecology?* (գաղափարախոսություն, թե սոցիալական էկոլոգիա) հռետորական հարցադրումով, որի պատասխանը թողնելով ընթերցողի հայեցողությանը՝ Սյունին առաջ է քաշում հայ-թուրքական հարաբերություններում իր կողմից կարևորվող Առաջին համաշխարհային պատերազմի և դրոման կամ սադրանքի գործոնները: Ընդ որում, նշյալ գաղափարները առանցքային են հեղինակի համար:

Միկրոտեքստերի բաժանումը, կարծես, ներկայացնում է Սյունիի ներակա մտադրությունը՝ ընթերցողին հրամցնելու և էլ ավելի ցցուն դարձնելու հայ-թուրքական հարաբերությունների աստիճանական վատթարացման գաղափարը: Յուրաքանչյուր միկրոտեքստ միտված է ընդգծելու միլլեթ (*millet*) համակարգի առանձնահատկությունները՝ մատնանշելով, որ հայերի սոցիալական դրությունը համեմատաբար ավելի լավ էր մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը: Սյունիի էական հարցադրումներից մեկն այն է, թե ինչպես դարեր ի վեր հայերը, լինելով իրենց համար բարերար մթնոլորտ ապահովող միլլեթ համակարգի մեջ, ենթարկվեցին ցեղասպանական բռնության (*How did the relatively benign symbiosis of several centuries, during which the ruling Ottomans referred to the Armenians as the loyal millet, break down into the genocidal violence of 1915? - p. 95*): Այս հարցի պատասխանը նա փորձում է գտնել՝ հենվելով թուրքական գաղափարախոսության մտացածին դրույթները ներկայացնող Ս. Ռ. Սոնյելի այն կարծիքի վրա, որ հայ-թուրքական խաղաղ հարաբերությունների վատթարացման հիմքում պետք է կարևորել «արտաքին հրահրողների» (*outside agitators - p. 96*) առկայությունը¹²: Այդուհանդերձ, փորձելով իր շարադրանքի մակերեսային ընկալման մակարդակում պահպանել հավասարակշռությունը, Սյունին բազմիցս նկարագրում է հայերի մինչպատերազմյան սոցիալական և քաղաքական ճգնաժամային իրավիճակը (*the Armenians were also underclass - p. 97*): Եվ իրոք, դեռևս 19-րդ դարի վերջերին է արձանագրվել այն փաստը, որ Օսմանյան կայսրությունում հայ-թուրք հարաբերություններն ըստ էության ստրուկի ու ստրկատիրոջ հարաբերություններ էին, և սրան մեծապես նպաստում էին կայսրության ընդունած օրենքներն ու որոշումները. օրինակ, ըստ սահմանված կարգի՝ յուրաքանչյուր քրիստոնյա, որպես սուլթանի հպատակ, պարտավոր էր առանց փոխհատուցման հյուրընկալել մահմեդական ծանապարհորդին կամ պաշտոնյային, որն ընտրում էր քաղաքի կամ գյուղի լավագույն տները, ապրում այնտեղ, իսկ տանտիրոջ ու նրա ընտանիքի հետ վարվում ինչպես ստրուկների: Հայերի ծանր սոցիա-

է հիշատակել ակադեմիկոս Գ. Ջահուկյանի առաջադրած մոդելը. (a) A (b), որտեղ A - տեքստն է, a - նախաբանը, իսկ b - վերջաբանը (Տե՛ս Գ. Բ. Ժաուկյան, *Универсальная теория языка. Пролегомены к субстанциональной лингвистике*, М., 1999):

¹² Տե՛ս S. R. Sonyel, *Yeni Belgelerin Isigi altinda Ermeni Techcirleri-Armenian Deportations: A Re-appraisal in the Light of New Documents*, T.T.K. Belleten c. XXXVI, no. 141, January 1972, էջ 31-69 (Turkish and English):

լական պայմանների և նվաստացուցիչ բարոյահոգեբանական վիճակի վկայությունն են նաև օրենքով ամրագրված բազմաթիվ հարկերը, որ պարտադրվում էին նրանց: Քրիստոնյաները պարտավոր էին կրել հատուկ տարբերանշան ունեցող հագուստ¹³:

Սյունիք, իր շարադրանքում կիրառելով the most brutal treatment of Armenians was at the hands of Kurdish tribesmen արտահայտությունը (p. 98), կարծես շեշտադրում է օսմանյան պետության՝ հայ-քրդական հակասությունները սրելու արտավոր քաղաքականությունը, որը միտված էր հայերի դեմ օգտագործելու քրդերի կրոնական մոլեռանդությունը¹⁴: Սակայն հեղինակի ներակա միտումը իշխանությունների պատասխանատվությունը մեղմելն է:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թուրքական իշխանությունները դեռ վաղուց էին գիտակցում բռնազավթած հայկական տարածքներում իրենց գերակայությունն ամեն գնով ապահովելու անհրաժեշտությունը, և հենց այդ պատճառով ոչ միայն հետևողականորեն իրականացնում էին հայ և այլ քրիստոնյա ազգերին հարկային անասելի ծանր բեռի տակ ծունկի բերելու, այլև Արևմտյան Հայաստանի էթնիկական դիմազիծը փոխելու քաղաքականություն՝ զանգվածային ջարդերի և տեղաբնիկներին թուրքացնելու միջոցով: Ընդ որում, Հայկական հարցը վերջնականապես լուծելու համար Օսմանյան կայսրությունը որդեգրեց նաև հայկական տեղանունների աղավաղման կամ անվանափոխման քաղաքականություն: Սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի կառավարությունը Հայաստան անունը փոխարինեց հնարովի Քրդստան կամ Անատոլիա եզրույթներով՝ ձգտելով հասկացնել, որ Հայկական հարց գոյություն չունի, քանզի չկա Հայաստան, չկա նաև Հայկական հարց¹⁵: Ուստի իրավացի են այն ուսումնասիրողները, որոնք Հայոց ցեղասպանության «գաղափարական ակունքները» փնտրելիս չեն սահմանափակվում միայն XIX դարի վերջին քառոր-

¹³ Նրանց արգելված էր լայն գոտի կապել և կարմիր կոշիկ հագնել: Ամիդում քրիստոնյայի առանձնանշանը կապույտ կտավից հագուստն էր: Նրա գլուխը պետք է անպայման փաթթոցով փակվեր, որպեսզի մահմեդականը գյավուրի մազերը չտեսներ, քանի որ մազերի ցուցադրումը գյավուրի «հպարտության» և թուրքին վիրավորելու նշան էր համարվում (տե՛ս **Ս. Կ. Պողոսյան**, նշվ. աշխ., էջ 124-137): Ոչ մահմեդականներին արգելված էր նաև ծի նստել և զենք ունենալ, կառուցել կրոնական նոր հաստատություններ և հրապարակավ կրոնական ծեսեր կատարել: Նրանց վկայությունը չէր ընդունվում մահմեդական դատարանում և այլն (տե՛ս **Ա. Մաքս**, *Ислам, Очерки истории*. М., 1962, էջ 30): Ավելին՝ արգելվեց «Հայաստան» բառի գործածությունը, փոխվեցին ուսումնական ծրագրերը հայկական դպրոցներում, բռնազրավվեցին բոլոր տեսակի ուսումնական նյութերը (քարտեզներ, գրքեր և այլն), որոնցում հիշատակվում էր Հայաստան նահանգը (ըստ թուրքիայում Անգլիայի հյուպատոս Լլոյդ Ջորջի 1890 թ. փետրվարի 19-ի վկայության) (տե՛ս «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году», предисловие проф. Л. А. Камааровского, М., 1896, էջ 139-140, 176):

¹⁴ Սուլթանին հաջողվեց քրդերին ներարկել այն գաղափարը, թե իբր նրանց բնօրրանը Հայաստանն է, հայերը եկվորներ են և ուզում են Քրդստանը Հայաստան դարձնել: Ռայա հայը ցանկանում է երկրի տեր դառնալ և քրդին ռայա դարձնել... (տե՛ս **Ս. Կ. Պողոսյան**, նշվ. աշխ., էջ 167):

¹⁵ Այդ մասին տե՛ս **Լ. Սահակյան**, Տեղանունների թուրքացումը Օսմանյան կայսրությունում և Հանրապետական թուրքիայում, Սոնրետալ, 2011, էջ 31, 46, որտեղ հեղինակը հանգամանորեն բացատրում է արևելյան Անատոլիա (երկու նույնիմաստ բաղադրիչների զուգակցմանը կազմված՝ արևելյան Արևելք) եզրաբանական բառակապակցության արհեստական ու հորինված բնույթը:

դով, այլև հաշվի են առնում Արևմտյան Հայաստանի էթնոժողովրդագրական զարգացումների միտումներն ընդհանրապես՝ սկսած XV դարի վերջից¹⁶: Այնպես որ, ջանալ Հայոց ցեղասպանության բուն պատճառները փնտրել Առաջին համաշխարհային պատերազմով ստեղծված իրադրության մեջ, մեղմ ասած, փախուստ է ռեալ իրականությունից:

Սյունիի շարադրանքի մի հատվածում կարդում ենք.

*The Turkish actions against the Armenians were taken in desperation and panic. Not only were the Russians advancing in the east and the British and French navies threatening the capital, but the Armenians in Van had risen in revolt. The response of the government was brutal: on April 24, 1915, 235 prominent Armenian intellectuals and politicians were arrested and exiled. In the next few months thousands of their countrymen were thrown out of their homes and either immediately executed or sent on deportation marches into the Syrian desert. By this **inhuman policy** the Turks tried to eliminate a people who had lived in eastern Anatolia for nearly a thousand years before the Turks arrived. This was their “final solution” to the Armenian Question, their last effort to secure Turkey for the Turks and save their empire. (Looking toward Ararat, pp. 29-30)¹⁷.*

Այստեղ Սյունիին, կրկին ընդառաջ գնալով օսմանյան իշխանությունների մեղքը մեղմելու իր ներքին ցանկությանը և հենվելով Մելսոնի կարծիքի վրա¹⁸, ընդունում է *դրոման կամ սադրանքի դրույթը*, որի հիմքում այն պնդումն է, թե հայերն իրենք են հրահրել թուրքերին իրագործելու այդ ոճրագործությունը: Այդ հանգամանքը հատկապես ընդգծվում է հետևյալ ասույթում. *the Turkish actions against the Armenians were taken in desperation and panic* (հայերի դեմ թուրքերն այդ գործողությունները կատարել են հուսահատությունից և խուճապից դրդված): Այս հայտարարությունը, մեղմ ասած, ազնիվ չէ Սյունիի կողմից, քանի որ եթե խոսքը հուսահատության ու

¹⁶ Տե՛ս, օրինակ, **Ա. Ա. Մելքոնյան**, Եղեռնի քաղաքականության ձևավորման ակունքները. XV դարի վերջ - 1915 թվական (Պատմաժողովրդագրական ակնարկ Էրզրումի նահանգի օրինակով) // «Հայոց ցեղասպանությունը (ուսումնասիրություններ)», էջ 35-54:

¹⁷ «Թուրքական գործողություններն ընդդեմ հայերի իրականացվեցին հուսահատությունից ու խուճապից դրդված: Ոչ միայն ռուսներն էին հարձակվում արևելքում, և բրիտանական ու ֆրանսիական նավատորմերը սպառնում մայրաքաղաքին, այլև հայերը Վանում ապստամբություն էին բարձրացրել: Կառավարության պատասխանը դաժան էր. 1915 թ. ապրիլի 24-ին 235 ականավոր հայ մտավորականներ ու քաղաքական գործիչներ ձերբակալվեցին և քստրովեցին: Հաջորդ մի քանի ամսվա ընթացքում հազարավոր հայեր դուրս քշվեցին տներից. կամ անմիջապես մահապատժի ենթարկվեցին, կամ էլ տեղահանվեցին դեպի Սիրիական անապատ: Այսպիսի անմարդկային քաղաքականությամբ թուրքերը փորձում էին ոչնչացնել մարդկանց, որոնք ապրել էին արևելյան Անատոլիայում **մոտ հազար տարի առաջ մինչև թուրքերի հայտնվելը**: Սա էր նրանց «վերջնական որոշումը» Հայկական հարցի լուծման գործընթացում, նրանց վերջին ջանքը՝ Թուրքիան թուրքերի համար ապահովելու և իրենց կայսրությունը պայշտպանելու համար»:

¹⁸ Տե՛ս **R. Melson** A Theoretical Inquiry into the Armenian Massacres of 1894-1896 // Comparative Studies in Society and History XXIV, 3 (July 1892), էջ 481-509:

խուճապի մասին է, ապա դա կարող էր վերաբերել միայն հայ և այլազգի քրիստոնյա բնակչությանը: Հատվածի շարադրանքից էլ պարզ երևում է, որ թուրքերի անմարդկային քաղաքականությունը (*inhuman policy*), իհարկե, ուղղված չէր բարի միտումներով տեղահանություն իրականացնելուն: Այն հայերի ոչնչացման՝ մեթոդապես կանխավ մշակված ծրագիր էր, ըստ որի՝ հայ ազգը երկրի երեսից ջնջելու առաջին արդյունավետ քայլը նրան գլխատելն էր, այսինքն՝ մտավորականության ոչնչացումը: Սյունիի հիմնավորումները մի նպատակ են հետապնդում. ամեն կերպ համոզել իր ընթերցողին, որ մի կողմից ռուսական բանակը, մյուս կողմից ֆրանսիական և անգլիական նավատորմն ու նաև Վանի ապստամբությունը Օսմանյան կայսրությունը զգել էին «անելանելի» ճգնաժամի մեջ: Կառավարությունը «այլ ելք չուներ» և կազմակերպեց հայազգի անմեղ մարդկանց ջարդը՝ անողորքաբար ոչնչացնելով ծերերին ու երեխաներին, կանանց ու տղամարդկանց¹⁹: Իհարկե, բացասական երանգավորման միավորների կիրառությամբ (*the government was brutal, were arrested and exiled, were immediately executed, deportation marches, inhuman policy, to eliminate a people*) Սյունիի ջանում է այն տպավորությունը ստեղծել, թե ինքն անաչառ է և դատապարտում է թուրքական կառավարության անմարդկային քաղաքականությունը: Սակայն դա ընդամենը տպավորություն է առերևույթ: Հատվածում ներակա միտումն այն է, որ նա արդարացնում է թուրքական կառավարության գործողությունները՝ դրանք «այայնամավորելով» վերջինիս հուսահատ ու խուճապահար հոգեվիճակով (*were taken in desperation and panic*): Հետաքրքրական է, որ այս «անաչառ գնահատողականության» կողքին Սյունիի չի մոռանում հայոց պատմությունն աղավաղելու և թուրքական գաղափարախոսության ջրաղացին ջուր լցնելու իր կարևորագույն առաքելության մասին՝ շեշտադրելով, որ հայերն այդ տարածքներում ապրել են մոտ հազար տարի առաջ մինչև թուրքերի հատնվելը (*a people who had lived in eastern Anatolia for nearly a thousand years before the Turks arrived*): Սյունիի համար, անշուշտ, շահեկան չէ ընդունել, որ հայերն այդտեղ ապրել են հազարամյակներ շարունակ, դեռ մինչև մ. թ. ա. 9-6-րդ դարերը՝ ուրարտական պետության գոյությունից էլ առաջ, քանի որ ուրիշ ինչպե՞ս պիտի կարողանա պաշտպանել ցեղասպանության՝ թուրքական պետական հայեցակարգից ուղղակիորեն բխող այն դրույթը, թե հայերը եկվորներ են տվյալ տարածաշրջանում, դրույթ, որն արդեն վաղուց բացահայտել է իր անհեթեթ, շինծու և չիմնավորված էությունը բազմաթիվ պատմագիտական ու լեզվաբանական ուսումնասիրություններում²⁰:

¹⁹ Մինչդեռ Ս. Վրացյանը նշում էր, որ հայերի բնաջնջման դավը վաղուց էր ծրագրված Իթքիատի որջում (տե՛ս **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 12): 1925 թ. նոյեմբերի 29-ին Թիֆլիսում ներկայացրած իր հաշվետվության մեջ Գ. Օրջոնիկիձեն հայերին որակում է որպես տառապյալ ազգ՝ նշելով, որ համաշխարհային նոր պատմության մեջ քիչ են այն ազգերը, որոնք այդքան զոհեր են տվել, և քիչ այն երկրները, որտեղ այդքան արյուն է թափվել, որքան Հայաստանում (տե՛ս **Օրջոնիկիձե Գ. Կ.** *Статьи и речи. Том 1, М., 1956, էջ 412*): Իհարկե, դժվար չէ նկատել, որ Գ. Օրջոնիկիձեի բուն նպատակը ոչ թե Հայոց ցեղասպանության լուսաբանումն է, այլ՝ նորաստեղծ խորհրդային կարգերի ջատագովումը: Սակայն մեզ համար կարևորն այստեղ ցեղասպանական գործողությունների ծավալների փաստումն է:

²⁰ Հայերի եկվորության դրույթը ուղղակի կամ անուղղակի հերքող աշխատություններից տե՛ս **R. D. Wilkinson**, *Introduction to the History of Pre-Christian Armenia*, Cam-

Մյուս կարևոր դրույթը, որին անդրադառնում է Սյունին, այն է, որ թուրքերն ու հայերը համերաշխ ու բարեկամաբար իրար հետ ապրել են կողք կողքի, և արևմտյան պետություններն ու հատկապես Ռուսաստանը խաթարեցին այդ խաղաղ հարաբերությունները²¹: Նա նշում է, որ մի կողմից ռուսների հարձակումը արևելքում, մյուս կողմից բրիտանական ու ֆրանսիական նավատորմների սպառնալիքն իրենց դերն ունեցան թուրքական իշխանություններին խուճապի մատնելու հարցում: Սակայն նա հակված է անտեսելու այն կարևոր հանգամանքը, որ ստեղծված իրավիճակը ճիշտ գնահատելու համար հարկ է նախ և առաջ հաշվի առնել Օսմանյան կայսրության կանխանշակված ծրագիրը, ապա՝ եվրոպական խոշոր տերությունների իրարամերժ շահերի բախումը Մերձավոր Արևելքում (չնայած Ռուսաստանի դեմ ուղղված նրանց ընդհանուր նպատակին) և, իհարկե, անգլիական կառավարության երկդիմի կեցվածքը, որն անշուշտ, նպաստեց գործողությունների հետագա ծավալմանը²²:

Հակահայկական քարոզչության գագաթնակետը ցեղասպանության իրողության ժխտումն է, որը թեև Սյունին ուղղակիորեն չի անում, սակայն թուրքական կառավարության գործողությունների նրա հիմնավորումները հետևողականորեն տանում են դեպի ժխտում: Իսկ այն, որ Արևմտյան Հայաստանում թուրքական կառավարության իրականացրած ցեղասպանությունը ուղղակի առնչություն չուներ Առաջին համաշխարհային պատերազմի ռազմական գործողությունների ընթացքին, կասկածից վեր է, ու հենց երիտթուրքերի դատավարության փաստաթղթերից է երևում, որ հայության բնաջնջման հարցը նախօրոք մշակված ու որոշված էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության կողմից²³: Այդ մասին վկայություն կա նաև Մևլան Ջադե Ռիֆաթի բերած փաստարկներում, ըստ որոնց՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը որոշում է կայացրել՝ ոչ մի մարդ կենդանի չթողնելու պայմանով ոչնչացնել հայերին և դրա իրականացումը հանձնարարել այսպես կոչված «Երեքի գործադիր կոմիտե»-ին (Բեհաեդդին Շաքիր, դոկտ. Նազըմ և Շյուքրի բեյ), որն էլ թուրքական բանտերից հանված քրեական հանցագործներից կազմված ջոկատների օգնությամբ արյունալի էջեր գրեց Թուրքիայի պատմության մեջ²⁴:

bridge, Mass., Society for Armenian Studies, 1983, **Մ. Ջուլալյան**, Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ (հին և միջին դարեր), Եր., 1995, **Ա. Այվազյան**, Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ (քննական տեսություն), Եր., 1998, **Капанцян Г. А.** Хаяса – колыбель армян. Этногенез армян и их начальная история. Ереван, 1947, **Гамкрелидзе Т. В., Иванов В. В.** Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, в 2-х томах. Тбилиси, 1984, **Գ. Բ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային շրջան, Եր., 1987, նույնի՝ Հայկական շերտը ուրարտական դիցարանում // Պատմա-բանասիրական հանդես, թիվ 1, 1986, **Յու. Գաբրիելյան**, Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն, Եր., 2001 և այլն):

²¹ Այս հարցի մասին մանրամասն տես **Գ. Եազըճեան**, Աբդուլ Համիդ II Կարմիր Սուլթան, Բեյրութ, 1980, էջ 180:

²² Տես «Братская помощь пострадавшим в Турции армянам», М., 1897, էջ 9, **Ս. Ներսիսյան**, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնակալության դեմ 1850-1870 թթ., Եր., 1955, էջ 313, **D. Lloyd-George**, The Truth about the Peace Treaties, in 2 volumes, 1938 (ռուս. թարգմ., «Правда о мирных договорах», т. 2, М., 1957, էջ 390:

²³ Տես «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի», էջ 5:

²⁴ Տես **Mevlan Zade Rifat**, Turkiye inkilabinin ic yuzu, 1-ci fasil, Halep, 1929, էջ 119:

Սյունիին իր հետագա շարադրանքում ընդգծում է Օսմանյան կայսրության մեջ առկա կրոնական դասդասումները և դրանց հոգեբանական նախադրյալները, որոնք հիմք էին ստեղծել մշտական խտրականությունների համար: Ու թեև, ներկայացնելով մահմեդական կրոնի առանձնահատկությունները, նա շեշտում է, որ իսլամը չի ընդունում սոցիալական ու ռասայական անհավասարություններ, այնուամենայնիվ հիշատակելով իսլամի գաղափարախոսության հիմքում ընկած երեք հիմնական անհավասարությունները՝ տեր և ստրուկ, կին և տղամարդ, հավատացյալ և անհավատ, Սյունիին ակնհայտորեն հերքում է ինքն իրեն՝ ականայից ապացուցելով, որ հայ-թուրքական բացասական հարաբերությունների արմատները շատ խորն են ու, թերևս, հենց դավանանքի տարբերությունների մեջ, մինչդեռ Առաջին համաշխարհային պատերազմի փաստը ընդամենը նպաստող հանգամանք էր և, փաստորեն, հարմար առիթ երիտթուրքերի համար՝ քողարկելու իրենց քաղաքականության իսկական էությունն ու նպատակները:

Անդրադառնանք Ռ. Սյունիի տեքստից մի այլ հատվածի.

Active persecution of non-Muslim was relatively rare in the earlier centuries of the Ottoman Empire, but, scholars of the millet system tell us, “discrimination was permanent and indeed necessary, inherent in the system and maintained by both Holy Law and common practice.” Islam did not recognize social or racial inequalities, such as those between rich and poor or black and white, but it did believe in three basic inequalities: master and slave, man and woman, believer and unbeliever. Whereas the slave could not become free except by will of the master, and a woman could not become a man, the unbeliever was able to join the faithful but chose not to take up the true faith. Thus, the inferiority of the gavur was voluntary (Looking toward Ararat, p. 97)²⁵.

Հատվածում տեր և ստրուկ (*master and slave*), կին և տղամարդ (*woman and man*), հավատացյալ և անհավատ (*believer and unbeliever*) խտրականությունների գոյությունը հիմնավորելով մահմեդական սուրբ գրքի կանոններով²⁶ Սյունիին, այնուամենայնիվ, գտնում է, որ եթե ստրուկի կարգավիճա-

²⁵ «Ոչ մահմեդականների ակտիվ հալածանքները համեմատաբար քիչ էին Օսմանյան կայսրության սկզբնական շրջանում, բայց ևայնպես միլլեթ համակարգը ուսումնասիրող գիտնականները նշում են, որ խտրականությունը մշտապես առկա էր և, իրոք, անհրաժեշտ ու բնորոշ էր այդ համակարգին: Այն պահպանվում էր Սուրբ Գրքի կանոնով և գործնականում: Մահմեդականությունը չէր ճանաչում սոցիալական և ռասայական այնպիսի անհավասարություններ, ինչպիսիք են հարուստն ու աղքատը, սևամորթն ու սպիտակամորթը, բայց այն հավատում էր երեք հիմնական անհավասարությունների գոյությանը՝ տեր և ստրուկ, կին և տղամարդ, հավատացյալ և անհավատ: Եթե ստրուկը չէր կարող ազատ լինել առանց տիրոջ կամքի, իսկ կինը՝ տղամարդ դառնալ, ապա անհավատը կարող էր միանալ հավատավորներին՝ ընտրելով ճշմարիտ հավատը: Այսպիսով գյավուրի ստորադասությունը կամավոր էր»:

²⁶ Այս կապակցությամբ հետաքրքիր մեկնաբանություն կարելի է գտնել Բաթ-Յեռրի «Ձիմմի. հրեաները և քրիստոնյաները իսլամի տիրապետության ներքո» աշխատության մեջ, որտեղ հեղինակը հենց իսլամի դավանական գաղափարախոսությամբ է բացատրում մուսուլմանների ոչ մուսուլման հպատակ ազգերի նկատմամբ դրսևորած վե-

կը ուղղակիորեն կախված է տիրոջ կամքից, իսկ կնոջը՝ ընդհանրապես փոփոխության ենթակա չէ, ապա անհավատը (տվյալ դեպքում քրիստոնյան) դեռ հնարավորություն ունի «ճշմարիտ» հավատքի գալու՝ ընդունելով մահմեդականություն: Այլ կերպ՝ գյավուրը կարող է փոխել իր «նվաստ» կարգավիճակը՝ հավատափոխ լինելով, դա պայմանավորված է նրա իսկ ընտրությամբ: Փաստորեն, Սյունիքն ինքն է հավաստում, որ Յայոց ցեղասպանության շարժառիթներից կարող էին լինել նաև ազգային-կրոնական մոտեցումները, մի դրույթ, որն իր մյուս աշխատության մեջ ջանում է հերքել: Այսպես.

*The story as told here, while not differing radically from many of the elements brought out in earlier historical writing, moves beyond certain widely held arguments. **This account argues that the Armenian Genocide was not planned long in advance but was a contingent reaction to a moment of crisis that grew more radical over time.** Yet the choice of genocide was predicted on long-standing **affective dispositions and attitudes that had demonized the Armenians as a threat that needed to be dealt with.** The genocide should be distinguished from the earlier episodes of conservative restoration of order by repression (1894-1896) or urban ethnic violence (1909). Though there were similarities with brutal policies of massacre and deportation that earlier regimes used to keep order, the very scale of the Armenian Genocide and its intended effects – to rid eastern Anatolia of a whole people – make it a far more radical, indeed revolutionary, transformation of the imperial setup. **The story here is that the genocide was neither religiously motivated nor a struggle between two contending nationalisms, one of which destroyed the other, but rather the pathological response of desperate leaders who sought security against a people they had both constructed as enemies and driven into radical opposition to the regime under which they lived for centuries** (A Question of Genocide, p 41)²⁷.*

ըրբերմունքը (տե՛ս **Бат-Иѳоп**, Зимми: евреи и христиане под властью ислама. Иерусалим, 1991):

²⁷ «Չնայած այստեղ շարադրվածը սկզբունքորեն չի տարբերվում նախորդ պատմագիտական աշխատություններում ներկայացված բազմաթիվ այլ պատմություններից, այն որոշակիորեն ավելի շատ փաստարկներ է պահանջում: Այս դիտարկմամբ կարելի է վիճարկել Յայոց ցեղասպանության նախօրոք ծրագրված լինելը: Այն, ավելի ճիշտ, բնական հակազդեցություն էր այն ճգնաժամային իրավիճակին, որը ժամանակի ընթացքում գնալով խորանում էր: Ցեղասպանության իրականացումը կանխորոշված էր այն դիրքորոշմամբ ու վերաբերմունքով, որոնք վաղուց ի վեր բուն էին դրել հայերի մեջ նրանց դարձնելով սպառնալիք, որն անհրաժեշտ էր կասեցնել: Ցեղասպանությունը պետք է տարբերել կառուցողական նկատառումներով նախկինում պահպանողականների կողմից իրականացված պատժիչ միջադեպերից (1894-1896) կամ էթնիկ բռնություններից (1909): Չնայած նախկին վարչակարգի օրոք կարգ ու կանոն պահպանելու նպատակով իրականացված ջարդերի ու տեղահանությունների հետ որոշակի նմանություններ կային, բայցնայնպես Յայոց ցեղասպանության մասշտաբը և արևելյան Անատոլիան մի ամբողջ ժողովրդից մաքրելու նպատակադրումը այն դարձնում են կայսերական ռեժիմը փոխելու շատ ավելի արմատական ու հիրավի հեղափոխական միջոց: Խնդիրն այն է, որ ցեղասպանությունը ոչ կրոնական շարժառիթ ուներ, ոչ էլ պայքար էր

Հատվածում առկա են բացասական առնչանակային երանգավորում ունեցող տարրեր (*demonize, threat, enemies, radical opposition*), որոնք գլխավորապես ներկայացնում են թուրքական կառավարության վերաբերմունքը հայերի նկատմամբ. հայերը որակվում էին որպես ծայրահեղականներ, զինված տեռորիստներ, անարխիստներ: Լեզվագործաբանական դիտանկյունից այստեղ գործ ունենք մի կողմից հաղորդման (տեղեկատվական), մյուս կողմից՝ ներգործման գործառույթի իրացման հետ: Լեզվական միավորների դիտարկումը ձևի և բովանդակության միասնության մեջ բացահայտում է դրանց տարաբնույթ խոսքային դրսևորումներն իրենց ակնհայտ և թաքնված իմաստային երանգներով. պարզ է դառնում, որ Սյունին, ջանալով առաջին պլան մղել օսմանյան կառավարության մեղսագործության դրդապատճառների խնդիրը, բազմաթիվ հակահայկական աշխատություններում շրջանառվող «զուտ տեղահանություն» իրողությունը բնութագրում է որպես ավելի քան տեղահանություն, որը հիշեցնում է նախորդ վարչակարգերի իրականացրած կոտորածները: Սակայն Սյունին չի մեկնաբանում ցեղասպանության իրական դրդապատճառները: Նրա «համոզմամբ» ցեղասպանությունը ո՛չ կրոնական շարժառիթ ուներ, ո՛չ էլ պայքար էր ազգայնական գաղափարներով տոգորված և միմյանց բնաջինջ անելու նպատակ հետապնդող երկու ժողովուրդների միջև (*the genocide was neither religiously motivated nor a struggle between two contending nationalisms, one of which destroyed the other*): Ըստ Սյունիի՝ այդ իրադարձությունները ավելի շատ պահի տակ էին իրականացված, քան նախօրոք ծրագրված: Դրանք պատերազմից «զլուխը կորցրած» թուրք պարագլուխների «հուսահատ» գործողություններն էին՝ ուղղված իրենց իսկ կողմից որպես «դավաճան, թշնամի, սպառնալիք» (*a threat that needed to be dealt with, enemies, radical opposition*) որակվող հայերի դեմ: Դժվար չէ նկատել, որ հեղինակի այս մոտեցումը ներակա կերպով ենթադրում է ցեղասպանության կանխակալ ծրագրվածության դրույթի հերքում:

Սակայն իրականացված գործողությունների կանխամտածված ու գիտակցված բնույթը նախ և առաջ հաստատում են հենց թուրք հեղինակները (Թաներ Աբչամ, Հալիլ Բերքթայ և ուրիշներ)՝ հենվելով կայսրության ներքին նամակագրության, ներքին գործերի նախարարությունից տարբեր նահանգապետերի ուղարկված հրամանների ու կարգադրությունների մեջ առկա փաստերի, այդ ժամանակահատվածում Օսմանյան կայսրությունում իրենց դիվանագիտական առաքելությունն իրականացնող օտարերկրյա դիվանագետների վկայությունների վրա²⁸:

Վերը բերված հատվածի *a people they had both constructed as enemies and driven into radical opposition to the regime under which they lived for centuries* ասույթը ակնհայտորեն հակասում է Սյունիի գրքի երկրորդ՝ *From Symbiosis to Massacre* միկրոտեքստում հայ ժողովրդի «վստահելի ու հավատարիմ լինելու» չհիմնավորված գաղափարները “loyal millet” և *benign symbio-*

երկու՝ ազգայնական գաղափարներով տոգորված թշնամի ժողովուրդների միջև, որոնցից մեկը ոչնչացրեց մյուսին: Այն, ավելի շուտ, հիվանդագին պատասխանն էր այն հուսահատ առաջնորդների, որոնք մի ամբողջ ժողովրդի դարձրել էին թշնամի՝ արմատական հակառակորդ այն վարչակարգին, որի ներքո նա ապրել էր դարերով»:

²⁸ Տե՛ս «Թուրքերը թուրքերի մասին», հ. III, էջ 18, 41, 42:

sis եզրույթների կիրառությամբ շեշտադրելու հեղինակի միտումին: Դժվար է հավատալ, թե թուրքական լծի տակ տառապող հայը, որը դարավոր քաղաքակրթության ու մշակույթի կրող էր, կարող էր վայրագ ասպատակություններով իր պապերի հողին տիրացած ու իրեն ստրկացրած թուրքի հետ կողք կողքի համերաշխ ու ներդաշնակ ապրել, մանավանդ որ Օսմանյան կայսրությունում բարբարոսական ֆեոդալիզմի ձևերն էին գերակայում, և դեպի քաղաքակրթություն տանող ճանապարհը հարթելու ցանկացած փորձ անհաջող ընթացք էր ստանում²⁹:

Հայի ու թուրքի ներդաշնակ համագոյակցության մասին Սյունիի քարոզը միանգամից հօդս է ցնդում, երբ ժանոթանում ենք 17-րդ դարի ակաճավոր պատմագիր Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատության ձեռագիր օրինակներում զետեղված գրչանկարին, որում բոլորածն օձի տեսքով պատկերված է Օսմանյան կայսրությունը՝ հանձինս մինչև 17-րդ դարի 60-ական թվականները գահակալած իր տասնութ սուլթանների: Գրչանկարի կենտրոնում հստակ երևացող օձի պատկերը՝ սուր ժանիքներով ու եղջյուրներով, խորհրդանշում է թուրքիայի դիրքորոշումն ու «հայրական» վերաբերմունքը հպատակ ազգերի և մասնավորապես՝ հայերի նկատմամբ³⁰:

Դիտարկենք ևս մի հատված, որտեղ կրկին կարևորվում է ենթատեքստի առկայությունը:

Instead of pursuing the programs of reform demanded by the European powers, the Porte committed itself to maintaining a cruel status quo in which its Armenian subjects had the choice of remaining the silent victims of Kurds and state injustice or of organizing their own self-defense. They did both. Many observers have noted that the urban Armenian elites, particularly the clergy and the wealthy business class, opposed the revolutionary parties, and only with great difficulty did the radicals, always a tiny minority among Armenians, convince some of the more self-reliant of their countrymen, like those of Sassun and Zeitun, to resist Kurdish taxation and impositions. The Ottoman government reacted to instances of Armenian resistance as if they were insurrections against the state, and in putting down these "rebellions" the Turkish army and Kurdish irregulars did not merely fight the armed rebels but massacred women and children and burnt villagers (Looking toward Ararat, p. 105)³¹.

²⁹ Ավելին, ինչպես իրավացիորեն նշում են Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը, երբ թուրքերը դեռ քոչվոր ցեղեր էին, և նրանց առևտրական ունակությունները սահմանափակվում էին միայն քարավանների թալանով, թուրքիայում առևտրական բոլոր գործարքները հույների, հայերի, սլավոնների ձեռքում էին, այլ ոչ թե թուրքերի: Այնպես որ, թուրքերին եվրոպայից հանելը չէր կարող դույզն-ինչ բացասաբար անդրադառնալ առևտրական գործարքների ընթացքի վրա (տես Կ. Մարքս և Փ. Էնգելս, Соч., том 9, М., 1957, էջ 25):

³⁰ Տես մանրամասն Ռ. Միրզոյան, Ինքնալրացում կամ մեկ նկարի պատմություն // «Էջմիածին», 2, 1998, էջ 81-89:

³¹ «Եվրոպական տերությունների կողմից պահանջված բարենորոգումների ծրագիրը հետևողականորեն իրականացնելու փոխարեն, Բարձր դուռը (ինձա՛ կենտրոնական իշխանությունը – Ս. Գ.) նպատակադրվեց պահպանել իր նախկին՝ դաժան պետության կարգավիճակը, և այդ պայմաններում թուրքական տիրապետության տակ

Թեև Սյունին այստեղ նույնպես ակնհայտ ժխտողական քաղաքակա-
նություն չի վարում, նա այդուհանդերձ փորձում է Թուրքիայում ստեղծ-
ված իրավիճակը մեկնաբանել եվրոպական երկրների պահանջով ձեռ-
նարկված «բարեփոխման» ծրագրերով և «դրա հետևանքով ձևավորված»
լարված մթնոլորտով: Հայերին ներկայացնելով սոսկ որպես ըմբոստ հե-
ղափոխականների (*the Armenian revolutionaries*), որոնք, նրա մեկնությամբ
առանձնապես մեծաթիվ չէին և լուրջ տարածայնություններ ունեին հայ
մտավորականության, հոգևոր դասի և հարուստ գործարար շրջանակների
հետ, Սյունին կրկին ջանում է հարցն այնպես ներկայացնել, որ կատար-
ված իրադարձությունների պատճառը հայերն էին³²: Սյուն կողմից՝ կա-
տարվածի պատճառները տեսնում է իշխանության պահպանողական դիր-
քորոշման մեջ՝ ըստ էության ներակա ձևով նորից ու նորից փորձելով մեղ-
մել Օսմանյան կառավարության ոճրագործությունը:

Վերջին *From Massacre to Genocide* միկրոտեքստում, փորձելով հան-
դես բերել որոշակի շրջահայացություն, Սյունին գրում է.

*An act of panic and vengeance metamorphosed monstrously into
an opportunity to rid Anatolia once and for all of the one people that
stood in the way of the Young Turks' plans for a Pan-Turanian empire.*

*One of the key questions about the Armenian genocide is the de-
gree of official state involvement in the carrying out of the massacres
that accompanied the forced deportations of Armenians. Turkish and
Turkophilic historians, like Stanford and Ezel Kural Shaw, have con-
ceded that deportations took place in 1915-1916 but have argued that
they were carried out for strictly military reasons and all precautions
were taken to safeguard the Armenians. Moreover, blame for the ne-
cessity for deportation is laid on the Armenians, who rose in April
1915 in the city of Van (Looking toward Ararat, pp.109-110)³³.*

ապրող հայերը կամ պետք է դառնային քրդերի և պետության անարդարության լռա-
կյաց գոհերը, կամ էլ կազմակերպեին իրենց ինքնապաշտպանությունը: Նրանք իրա-
կանացի են երկուսն էլ: Շատ ուսումնասիրողներ նշել են, որ քաղաքաբնակ հայ էլի-
տան՝ մասնավորապես հոգևորականությունը և հարուստ գործարարները, հակադր-
վում էին հեղափոխական կուսակցություններին, և արմատականները, որոնք հայ ժո-
ղովրդի միայն փոքր մասն էին, մեծ դժվարությամբ էին համոզում իրենց առավել
վստահելի հայրենակիցներին, օրինակ՝ Սասունում ու Ջեթունում, դիմադրել քրդերի
սահմանած հարկերին ու այլ հարկադրանքներին: Օսմանյան կառավարությունը հակ-
ազդեց հայկական դիմադրության փորձերին որպես պետության դեմ ձեռնարկված
ապստամբությունների, և այդ «ապստամբությունները» ճնշելիս թուրքական զորքը և
քրդական անկանոն ջոկատները ոչ միայն պայքարեցին զինված ապստամբների դեմ,
այլև կոտորեցին կանանց և երեխաներին, այրեցին գյուղերը»:

³² Սակայն Ստամբուլի Սաբանջը համալսարանի պրոֆեսոր, թուրք պատմաբան
Հալիլ Բերքթայի համոզմամբ 1914-1915 թթ. (մինչև 1915 թ. ապրիլը) հայկական որևէ
ապստամբության, առավել ևս համազգային ապստամբության մասին խոսք անգամ
չկար, իսկ հայկական կազմակերպությունների առանձին անդամների կողմից ձեռնարկ-
վող քայլերը այն չէին, որ թուրքական կառավարության իրականացրած գործողություն-
ների ողողապատճառ դառնային (տե՛ս «Թուրքերը թուրքերի մասին», հ. III, էջ 39-40):

³³ «Խուճապի և վրեժխնդրության գործողությունը հրեշավոր փոխակերպության
ենթարկվեց՝ հնարավորություն ստեղծելով Անատոլիան մեկընդմիջտ մաքրելու մի ժո-
ղովրդից, որը կանգնել էր երիտթուրքերի պանթուրանական ծրագրի իրականացման
ճանապարհին: Հայոց ցեղասպանության առանցքային խնդիրներից է հայերի բռնի տե-

Հատվածի համատեքստում հուզաարտահայտչական տարբեր միավորների առկայությունը (*panic and vengeance metamorphosed monstrously, the forced deportations of Armenians*) ստիպում է լսողին / ընթերցողին առաջին հայացքից ինքնաբերաբար, սակայն իրականում բարդ եզրահանգման մեխանիզմների միջոցով ասույթի արտաքին (մակերեսային) իմաստային դաշտից անցում կատարել ներքին (խորքային) վերնշանային դաշտ և ընկալել հեղինակի արտահայտած «սրտացավությունը» հայ ժողովրդի հանդեպ: Դրանց կողքին առկա *the key questions, the degree of official state involvement, have argued, strictly military reasons* միավորները խտացնում են հեղինակի ջանքերը՝ ևս մեկ անգամ ներշնչելու ընթերցողին, որ օսմանյան կառավարության գործողությունները զերծ էին միտումնավոր նպատակաուղղվածությունից: Հենց այս առումով է, որ Սյունին առաջ է քաշում ջարդերի ընթացքում թուրքական կառավարության մասնակցության աստիճանի հարցը: Նա առիթը բաց չի թողնում ևս մեկ անգամ շեշտադրելու, որ արատավորը Ռուսաստանի մղումներն էին, իսկ տեղահանությունների բուն պատճառը՝ պատերազմական գործողություններով պայմանավորված հանգամանքները: Մինչդեռ ֆրանսիացի հրապարակախոս Ռենե Պինոնը³⁴ կասկած անգամ չունի, որ երիտթուրքերը նախօրոք էին ծրագրել հայերի տեղահանությունը և, ապակողմնորոշելով միջազգային հանրությանը, իրենց դաժան ծրագիրը քողարկում էին Թուրքիայի պատերազմական ծանր դրության փաստով³⁵:

Սյունիի աշխատությունների հայանպաստ բնույթը թվացյալ է: 2000 թվականին կազմելով գիտնականների WATS (Workshop on Armenian and Turkish Scholarship) կոչվող խումբը՝ նա փորձում է վերանայել Հայոց ցեղասպանության խնդիրը հայ, թուրք և արևմտյան մի շարք գիտնականների համատեղ քննարկումների լույսի ներքո: Այսպես՝ այդ քննարկումների արդյունքներն ամփոփող “A Question of Genocide. Armenians and Turks at the End of the Ottoman Empire” գրքի ներածական մասում Սյունին և նրա համահեղինակ Ֆաթմա Մյուզե Գյոչեկը գրում են.

ղահանությունների ընթացքում կատարված ջարդերին պետության մասնակցության աստիճանի հարցը: Թուրք և թրքամետ պատմաբանները, ինչպես օրինակ՝ Սթենֆորդ և Էզել Կուրալ Շոուները, ընդունել են, որ 1915-1916 թթ. իրոք տեղահանություններ եղել են, սակայն նրանց անդամք դրանք իրականացվել են զուտ ռազմական նկատառումներով, և բոլոր նախագուշակական միջոցները ձեռնարկվել են հայերին պաշտպանելու համար: Դեռ ավելին, տեղահանությունների անհրաժեշտությունը ծագել է հայերի մեղքով, երբ 1915 թ. ապրիլին նրանք ապստամբություն բարձրացրին Վանում»:

³⁴ Ռ. Պինոնը բերում է պատմաբանների որոշ վկայություններ թուրքական «տեղահանությունների» վերաբերյալ. 18000-ից միայն 150 էրզրումահայեր են հասել իրենց նպատակատեղը, իսկ հարբերդից տեղահանվել էին հազարավոր հայեր և քաղաքից ոչ հեռու գտնվող տարածքում գնդակահարվել, տես **Rene Pinon**, *La suppression des Armeniens; Methode allemande, travail turc*. Paris, 1916, էջ 20-27, <http://www.imprescriptible.fr/documents/pinon/>, “Геноцид Армян в Османской Империи”, сборник документов и материалов под редакцией М. Г. Нерсисяна, Ер., 1983, **V. Bryce**, *The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916*, London, 1916):

³⁵ Այս առումով տեղին է մեջ բերել Ս. Վրացյանի խոսքերը. «Մի անբողջ քաղաքակիրթ ժողովուրդ խաչ հանվեց ու նահատակվեց վայրագորեն՝ աշխարհի աչքի առջև. ոչ ոք չըմբոստացավ ու չմիջամտեց: Եվ ո՞վ կարող էր, ո՞վ սիրտ ու կամք ուներ միջամտելու, երկրագունդը խեղդվում էր արյան մեջ: Մարդկության խիղճը քար էր կտրել...» (**Ս. Վրացյան**, նշվ. աշխ., էջ12):

Historians from Armenia met with those from Turkey and their respective diasporas. There was no dispute that deportations and massacres had occurred. The evidence mounted that the forced movement of the Armenians had been ordered by the Young Turk government and party action, and that the mass killing was both the result of government and party action, and that while there were several moments of Armenian resistance (most notably at Van in 1915), there was no civil war. The two opposing Turkish and Armenian nationalist narratives were replaced by a single shared account based on documented record. Yet many blank spots remained; archival access in Turkey remained restricted; and disagreements about timing of events, the motivation of the Young Turk leaders, and, most importantly, the question of whether to call the mass killings genocide had yet to be resolved (A Question of Genocide, pp. 5-6)³⁶.

Հատվածում առաջին իսկ հայացքից ուշադրություն են գրավում այն առանձնահատուկ բառային ու քերականական տարրերը (*there was no dispute, the evidence mounted that, there was no civil war*), որոնք միտված են արտահայտելու հեղինակների՝ այս կամ այն փաստերի, իրողությունների ու դեպքերի իրազեկությունը և կարող են դիտարկվել որպես ճանաչողական կառույցներ: Սակայն Հայոց ցեղասպանության հարցի այսօրինակ ճանաչողությունն ու իրազեկությունը լայն առումով չեն հաղթահարում իրականության հետ ոչ մի կապ չունեցող թուրքամետ գաղափարախոսության շինծու դրույթները: Հատվածի առավել լայն համատեքստում ներկայացնելով WATS խմբի կազմավորման նախադրյալներն ու պատճառները՝ հեղինակները նախ փորձում են ընդգծել Հայոց ցեղասպանության հարցի քննությունը երկու կողմի պատմաբաններին վստահելու կարևորությունն ու օգտակարությունը³⁷, որը, սակայն, հակառակ ազդեցության էֆեկտ է ա-

³⁶ «Հայաստանի պատմաբանները հանդիպեցին թուրք պատմաբանների և Սփյուռքի իրենց ներկայացուցիչների հետ: Տարակուսանք չկար, որ կատարվել են տեղահանություններ ու ջարդեր: Փաստերը վկայում էին, որ հայերի բռնի տեղահանությունները երիտթուրքերի կառավարության ու կուսակցության հրամանով էին կատարվել, որ զանգվածային ջարդերը նույնպես նրանց գործողությունների արդյունքն էին: Թեև հայերի կողմից կար որոշ դիմադրություն (մասնավորապես՝ 1915 թ. Վանում), սակայն քաղաքացիական պատերազմ չէր եղել: Երկու հակադիր՝ հայկական և թուրքական կողմերի ազգայնամետ շարադրանքները փոխարինվեցին ընդհանուր փաստերով հիմնավորված մեկ դրույթով: Այդուհանդերձ, շատ բաց կետեր մնացին, Թուրքիայի արխիվների հասանելիությունը շարունակում էր սահմանափակ մնալ: Կային նաև որոշ տարածայնություններ՝ կապված իրադարձությունների ժամանակագրության, երիտթուրքական առաջնորդներին այդ գործողություններին մղող պատճառների և որ ամենակարևորն է, այն հարցադրման հետ, թե արդյո՞ք այդ զանգվածային ջարդերը ցեղասպանություն անվանելը ճիշտ է: Սրանք դեռ սպասում են իրենց լուծմանը»:

³⁷ Թուրք առաջադեմ շատ մտածողներ այն կարծիքին են, որ այս հարցի պարզաբանումը պատմաբաններին թողնելու թուրքական կառավարության առաջարկը «ձանձրույթ պատճառող հիմարություն» է և լավագույն միջոցը հարցի արդարացի լուծումը փակուղի մտցնելու համար: Բանն այն է, որ թուրքական իշխանություններն ունեն պատմաբանների իրենց խումբը (թուրք պատմաբան Սելիմ Դերինգիլը նրանց «Ա թիմ» է անվանում), որն արդեն ունի իր կանխորոշված ու անփոփոխ դիրքորոշումը, քանի որ այդ է կառավարության պատվերը, և ի վերջո խնդիրը քաղաքական է և անի-

ռաջացնում հատվածի հետագա շարադրանքում: Բանն այն է, որ թեև Սյունին ու Գյոչոկը նշում են, որ տեղահանություններ ու ջարդեր եղել են, այնուամենայնիվ նրանց համար դեռևս մնացել են «անլուծելի» ու «մութ» անկյուններ Հայոց ցեղասպանության կազմակերպման, իրականացման և հենց բուն *genocide* եզրույթի կիրառման նպատակահարմարության վերաբերյալ: Հատվածի վերջում կիրառելով *yet* (դեռևս) միավորը *most importantly* (որ ամենակարևորն է) արտահայտության հետ զուգակցված՝ հեղինակներն ավելի են կասկածի տակ դնում Հայոց ցեղասպանության եղելությունն ու ճշմարտացիությունը:

Ամփոփելով՝ կարելի է նկատել, որ հիշյալ ուսումնասիրություններում Առաջին աշխարհամարտի և «արտաքին սադրիչի» գործոնները հետևողականորեն շահարկվում են դարասկզբի ցեղասպանական իրադարձությունների պատասխանատվությունը թուրքական իշխանությունների ուսերից վերցնելու և միջազգային գիտական հանրության ուշադրությունը Հայոց ցեղասպանության ճշմարիտ դրդապատճառների ընկալումից ու մեկնաբանությունից շեղելու նպատակով: 1993 թ. հրատարակած *Looking toward Ararat* աշխատության մեջ Սյունիի՝ Հայոց ցեղասպանության ճանաչումը զուտ ձևական է, քանի որ ցեղասպանությունը ժխտելու հեղինակի միտումն այստեղ այնուամենայնիվ ներակա դրսևորում ունի, այդ է վկայում ինչպես արտալեզվական (պատմաբաղաբական), այնպես էլ նրա շարադրանքում տեղ գտած լեզվական փաստերի մեր քննությունը: 2011 թ. նրա խմբագրությամբ լույս տեսած *A Question of Genocide* գրքում նա խուսանավելու փորձեր այլևս չի անում, այլ որոշակիորեն հարցականի տակ է դնում Հայոց ցեղասպանության իրողությունը: Իսկ նրա «գիտական փնտրտուքներն» ընդամենը ճանապարհ են հարթում բազմաթիվ երկմտությունների ու շահարկումների համար: Սրա վկայությունն է նաև նրա կողմից *Rethinking the Unthinkable: Toward an Understanding of the Armenian Genocide* ենթավերնագրի ընտրությունը *Looking toward Ararat* գրքում, որով հեղինակը մի կողմից կարծես թե չի ժխտում երիտթուրքական կառավարության ոճրագործությունը՝ դատապարտելով այդ աներևակայելի եղելությունը (*unthinkable*), մյուս կողմից՝ պարարտ հող է ստեղծում այլընտրանքային մեկնաբանության համար (*rethinking*)՝ ներակա կերպով ընդգծելով այն անընդունելի ու արատավոր գաղափարը, թե Հայոց ցեղասպանության փաստը վիճարկման առարկա է:

СЕДА ГАСПАРЯН – Причины Геноцида армян в интерпретации Р. Сюни. – В статье содержится языковой анализ книги Р. Сюни “Взгляд на Арарат”, а также сборника статей “Вопрос геноцида” под его редакцией. Изучение единиц

մաստ է այն տեղափոխել պատմագիտության դաշտ (տե՛ս «Թուրքերը թուրքերի մասին», հ. III, էջ 24, 32-33): Այս առաջարկի անհեթեթությունն ու վտանգավորությունը լավագույնս հիմնավորվում է թուրքական ժամանակակից պատմագրության ներկայացուցիչ Մեհմեդ Փերինչեքի 2011 թ. Մոսկվայում հրատարակած «Հայկական հարցը ռուսական պետական արխիվների 120 փաստաթղթում» գրքի հանգամանակից քննական վերլուծությամբ, որը թույլ է տալիս բացահայտելու Հայոց ցեղասպանությունը ժխտելու նպատակով Մ. Փերինչեքի կիրառած մեթոդներն ու հնարները (աղբյուրների կեղծում ու աղավաղում, պատմական փաստերի ուրացում, ժխտում և այլն), որոնք գիտականության հետ որևէ առնչություն չունեն (տե՛ս Գ. **Միրзоян, Н. Гончар**, Почему суд по факту Геноцида армян Турция призывает доверять историкам, Ер., 2012):

различных языковых уровней (слов, словосочетаний и т. п.) выявляет имплицитное намерение Р. Сюни скрыть истинные причины Геноцида армян – беспрецедентного по своей жестокости массового уничтожения коренного населения Западной Армении, осуществленного младотурками. Ловко пользуясь языковыми средствами и фальсифицируя исторические реалии, Р. Сюни пытается снять ответственность и вину с турецкого правительства и, направляя читателя по ложному пути, ставит под сомнение сам факт геноцида.

SEDA GASPARYAN – “*Interpretation*” of the Causes of the Armenian Genocide by R. Suny. – The article reviews the causes of the Armenian Genocide presented in the book *Looking toward Ararat* by R. Suny, as well as the book of collected articles *A Question of Genocide* edited by him. Our research carried out along the lines of text linguistics allows to reveal the implicit intents of R. Suny to veil the actual causes of the Armenian Genocide, planned and accomplished by the Young Turks. Suny’s skilful manipulation of language elements helps him to falsify historical facts and relieve the Turkish government of the responsibility for the unprecedented genocidal events at the beginning of XX century. His final goal is to doubt the reality of the Armenian Genocide.